

ԿՅԱՆՔԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Այսօր աշխարհը պայքարում է նոր կորոնավիրուսի դեմ: Մարդկությունը որդեգրում է կյանքի համար պայքարի նոր վարքագիծ, նոր ենթամշակույթ: Մակայն ինչ էլ որ լինի, մարդը չի կարող զրկված լինել մշակույթի ու կրթության հետ շփվելու, հաղորդակցվելու իր սահմանադրական իրավունքից:

Կարճ ժամանակ պահանջվեց, որ մարդկությունը համոզվի, որ պետք չէ սպասել համաճարակի ավարտին, ուստի համացանցը դարձավ առաջնային հարթակ՝ հատկապես դպրոցների համար: Առցանց տիրույթում, որտեղ արդեն նոր ոճ ու որակ է ձևավորվել կրթությունը շարունակելու, մենք հայոց լեզվի ուսուցիչներս նույնպես շարունակեցինք մեր աշխատանքը: Շատերին հաջողվեց հայ մանուկներին ու մայրերին ներգրավել հեռակա ուսուցման գործընթացի մեջ:



Սվետան



Էդուարդը



Արամը



Գոհարը



Միլանան




Նոնան




Լևոնը



Սառան



Յանան



Անին



Լիլիթը



Քրիստինան



Ռոբերտը



Մարին



Ֆենյան

Հանուն արդարության պետք է ասել, այս մեթոդը երբևէ չի կարող փոխարինել իրական շփմանը՝ երեխայի հետ, դպրոցի միջավայրին ու մթնոլորտին: Արդյունքը գերազանց չի կարող լինել, սակայն ստեղծված պայմաններում բավարար է:

Շատ երեխաներ ու ծնողներ ջանասիրությամբ արձագանքեցին տրված հանձնարարություններին:

Այսօր հայոց լեզվի խմբակներում ուսումնական տարին ամփոփելուց առաջ, եկեք ծանոթանանք ու շնորհակալություն հայտնենք այն ուսուցիչներին, մայրերին ու երեխաներին, ովքեր արտակարգ պայմաններում շարունակեցին սիրով ուսանել մաշտոցյան գրերը, երգն ու պարը:

Հուսանք, որ կյանքը շուտով իր բնականոն հունի մեջ կընկնի: Եղևք առողջ, լավատես ու բարի:

Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Նկարներում՝ ուսուցիչներ Արմինե Հովսեփյանի, Սոնա Կարապետյանի, Լուսինե Պետակյանի և պարի ուսուցչուհի Լիլիթ Մովսիսյանի սաները մասնակցում են առցանց պարապմունքներին՝ ՄԱՍԼՈՎ ԻՐԱՐ ԿՈՂՔԻ ԼԻՆԵԼՈՎ ԻՐԱՐԻՑ ՀԵՌՈՒ: